



ԼՐԱՏՈՒ

ԹիՒ 8 - Օգոստոս 2025



70 տարի էլ անելի՝ Սերունդներու Հայեցի Դաստիարակութիւն





Տնօրէնութեան խօսքը

Ուսումնական տարին շուտով հասաւ իր աւարտին: Ուստի, կ'ուզեմ պահ մը մտածել ու կեդրոնանալ մեր կրթական օժախին ունեցած բազմաթիւ ձեռքբերումներուն, մարտահրաւերներուն եւ անմոռանալի պահերուն վրայ, որոնք կիսած ու ապրած ենք միասնաբար:

Մեր ուսանողները հեշտօրէն կը համակերպուին մեր կրթական ծրագիրներուն, եւ շարունակաբար կ'աճին նոր գիտելիքներու ձեռքբերմամբ եւ ամուր ու արդար նկարագիր կերտելու գործընթացին մէջ: Մեր վարժարանին մէջ մեր աշակերտութիւնը նուիրուածութեամբ ձեռք կը բերեն նորանոր գիտելիքներ, որոնք մշտապէս կ'արձանագրեն ամենօրեայ փոքրիկ յաղթանակներ հպապարտութիւն արթելով բոլորին:

Կ'ուզեմ իմ խորին շնորհակալութիւնս յայտնել Վարժարանիս հոգաբարձութեան, որ մշտապէս կը ցուցաբերէ իր վստահութիւնը մեր կատարած առաքելութեան ուղղութեամբ, նաեւ կը գնահատէ մեր մանկավարժներուն կատարած աշխատանքները, տէր կանգնելով անոնց իրաւունքներուն, միաժամանակ մեծ հոգատարութեամբ կը մօտենայ մեր սան-սանուհիներու կրթական մեկնարկին եւ ձեռք բերելիք յաջողութիւններուն:

Մեծ պատիւ է ինծի համար աշխատիլ նպատակով եւ ազնուութեամբ առաջնորդող վարժարանս հովանաւորող հոգաբարձութեան հետ, որոնց հետ իմ ունեցած կրթական ու վարչական գործունէութիւնը կարելի դեր կը խաղայ վարժարանիս անվտանգ ու օգտաշատ յառաջընթացին, հարստացնելով ու ապահովելով ուսումնական առողջ միջավայր մը:

Այս առթիւ, իմ անկեղծ շնորհակալութիւնը կը յայտնեմ մեր նուիրեալ ուսուցչակազմին եւ պաշտօնէութեան՝ իրենց կատարած անխոնջ ջանքերուն եւ կրթութեան հանդէպ անոնց ցուցաբերած վարուելակերպին ու իւրաքանչիւր աշակերտի հանդէպ ցոյց տրուած աջակցութեան համար: Անոնց քրտնաջան աշխատանքը մեր վարժարանին յաջողութեան հիմքն է, իսկ վարժարանիս աշակերտութեանց ծնողներուն կը յայտնեմ իմ երախտապարտութիւնը, մեր կրթօժախի հանդէպ իրենց համագործակցութեան, մանաւանդ անսահման վստահութեան: Անոնց ներգրաւուածութիւնը, քաջալերանքը եւ համագործակցութիւնը կ'օգնեն, որպէսզի մեր դպրոցը դառնայ դաստիարակող եւ աշխոյժ միջավայր՝ ջանքելու համար նպատակայարմար դաստիարակութիւն:

Ի վերջոյ իմ շնորհակալական խօսքս կ'ուղղեմ մեր սիրելի աշակերտներուն, որ ամէն օր պատրաստ են սորվելու, առաջնորդուելու եւ աճելու՝ անոնք կ'ոգեշնչեն մեզ իրենց հետաքրքրասիրութեամբ եւ բարութեամբ:

Երբ կը մօտենայ ամրան արձակուրդը, յոյսով եմ, որ մեր աշակերտներէն իւրաքանչիւրը ժամանակ պիտի գտնէ հանգստանալու, լիցքաւորուելու եւ սիրելիներուն հետ հաճելի ժամեր անցընելու համար: Այս բոլորէն ետք, մենք անհամբեր պիտի սպասենք աշնան՝ որպէսզի տարի մը եւս միասին բոլորելու՝ սորվելու եւ միասնաբար աճելու հնարաւորութիւնը ունենանք:

Երախտագիտութեամբ՝

Սեւանա Սեմերձեան Տարագձեան



Վահան Թեքեան Միջն. Վարժարանի Նախակրթարանի Վերանորոգում Ուսուցչարանի Բացումը

Զորեքշաբթի, 21 Մայիս 2025 թուականը յիշարժան օր մըն էր Վահան Թեքեան Միջնակարգ վարժարանին համար, որովհետեւ տեղի ունեցաւ նախակրթարանի նորոգում ռուսուցչարանին բացումը բարերարութեամբ՝ Գրիգոր եւ Մաքրուի Բիւրձեան Կրթական Ֆոնտին, ներկայութեամբ՝ բարերար քոյրերու՝ Մայտա, Հիլտա եւ Մարինա Բիւրձեաններու, ԹՄՄ Հիմնադիրներու Մարմնի անդամներուն, ԹՄՄ-ի Տեղական վարչութեան Ատենապետ Տօքթ. Յակոբ Փափազեանի եւ անդամներու, ՌԱԿ Հրջանային վարչութեան ատենապետ Տօքթ. Աւետիս Տաքէսեանի եւ անդամներու, Վարժարանիս հոգաբարձութեան ատենապետուհի Տիկ. Անի Լաչինեան-Մակարեանի եւ անդամներու, Տնօրէնութեան, հիւրերու եւ ուսուցչակազմին:



Խօսք առին, վարժարանիս հոգաբարձութեան ատենապետուհի Տիկ. Անի Լաչինեան-Մակարեան եւ տնօրէնուհի Տիկ. Սեւանա Սեմերձեան Տարագձեան, որոնք իրենց խօսքին մէջ վեր առին բարերարներուն եւ իրենց դուստրերուն ներդրումը վարժարանիս բարգաւաճման եւ յարաճուն վերելքին սատար հանդիսանալուն համար:





Վերանորոգումն ուսուցչարանին մէջ յուզումնախառն զգացումներով առջնուն խօսք առաւ Քիրէճեան ընտանիքի աագ դուստրը Մայտա Քիրէճեան, անդրադառնալով Քիրէճեան ընտանիքի անդամներուն ունեցած սերտ կապին՝ հանդէպ մեր վարժարանին, որոնք երկար տարիներէ ի վեր շատ ջերմ եւ սերտ վերաբերմունք ցոյց տուած են վարժարանիս հանդէպ՝ հանդիսալով միշտ հոգատար: Ան իր խօսքին մէջ յիշեց, թէ իր հայրը եղած էր վարժարանիս հոգաբարձութեան անդամ եւ գանձապահ եւ ի յիշատակ իրենց բարերար ծնողքէն ստացած աւանդին, իրենց կարգին պիտի շարունակեն կատարել այս վսեմ բարեգործութեան առաքելութիւնը:





Ամփոփ տեղեկագիր Վահան Թեքեան Միջն. Վարժարանի ծրագիրներուն եւ գործունէութիւններուն 2024-2025 ուսումնական տարուան

Ակադեմական Գործունէութիւններ

Նկարագիրի Կրթութեան Ծրագիր

Ստեղծագործութիւն



Տան Անվտանգութիւն



Կազմակերպություն




Ղեկավարություն



Գիրքի Օր

13 Մարտ 2025-ին ունեցանք գիրքերու հետ հետաքրքրական օր մը: Ընթերցանութիւնը կ'օգնէ աշակերտներուն մօտ զարգացնելու կարեկցանքը, բարելաւելու կեդրոնացումը, բարձրացնելու լեզուական հմտութիւնները եւ խթանելու ստեղծագործական ունակութիւնները:





Զարգացման Մրցում

Խաղաղության Լիբանանի այս տարուան մեր թեմային ծիրէն ներս, 9 Մայիս 2025-ին, վարժարանիս հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ զարգացման մրցում՝ արաբերէնով նուիրուած Լիբանանին, որուն մասնակցեցան Միջնակարգի աշակերտները:



Ծաղիկ դասարանը Հպարտ Քայլերով Կ'ուղղուի Դէպի Նախակրթարան

Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի Ծաղիկ դասարանի փոքրիկները առիթը ունեցան բարձրանալու Նախակրթարանի Ա. դասարան, մօտէն տեսնելու եւ ծանօթանալու համար յաջորդ տարուան իրենց դպրոցական օրերը:



Ձեռային Աշխատանքների Ցուցադրություն



Ուսուցիչի Վերաորակաւորում

Բարեկեցութեան գիտութիւն թեմայով դասախօսութիւն

6 Փետրուար 2025-ին, մեր վարժարանի ուսուցիչներն ու աշխատակազմը մասնակցեցան հաճելի եւ հմտութիւններ զարգացնող դասախօսութեան մը Բարեկեցութեան գիտութիւն խորագրով: Սոյն դասախօսութիւնը վարեց Տիկ. Վերա Արովեան Սիսեռեան:

Հոգաչափ շնորհակալութիւն կը յայտնենք ազնուափայլ Տիկ. Վերային, որ իր հարուստ փորձերէն փունջ մը կիսելով մեր մանկավարժներուն հետ, անոնց մտաւոր եւ զգացական բարեկեցութիւնը խթանելու համար:



Մշակութային Տօներ

Վարդանանց Տօն

26 Փետրուար 2025-ին, մեր վարժարանի Յակոբ Պարսամեան սրահին ներս տեղի ունեցաւ Վարդանանց հերոսամարտի յիշատակը ոգեկոչող աշակերտական ձեռնարկը, ներկայութեամբ՝ հիւր պատգամաբեր Հոգեշնորհ Տէր Անդրանիկ Վրդ. Թիրիմեանի:



Ապրիլ 24

14 Ապրիլ 2025-ին վարժարանիս Յակոբ Պարսամեան հանդիսասրահին մէջ ոգեկոչեցինք Հայոց Ցեղասպանութեան 110 ամեակը ներկայութեամբ երիտասարդ մտաւորական Տիար Արթիւր Շէնեանի:





Բարեկենդան

3 Մարտ 2025-ին տեղի ունեցավ Վահան Թեքեան վարժարանի, Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտեզի "Բարեկենդան"-ի ձեռնարկը:





Կրթական և Մշակութային Պատյոյտներ:

Այցելություն Wooden Bakery

19 Փետրուար 2025-ին մեր աշակերտները այցելեցին “Wooden Bakery”:



Աշակերտներու Տպաւորութիւնները:

19 Փետրուար 2025-ին, “Wooden Bakery”-ի գործարանը այցելեցինք: Երբ ներս մտանք, տեսանք ալիւրի մեծ պարկեր, ապա մեծ մեքենաներ, որոնց մէջ խմոր կը շաղէին: Հետաքրքրութեամբ դիտեցի, թէ ինչպէս խոհարարները կը պատրաստէին հացի տեսակներ, կարկանդակ, անուշեղէններ, եւ թէ ինչպէս փռապանը զանոնք կ'փեր: Վերջապէս մեզի կարկանդակ եւ Քրուասան հրամցուցին: Ես շատ ուրախ վերադարձայ դպրոց, որովհետեւ շատ սիրեցի այս դաս-պտոյտը:

Կալինա Պորանեան
ՆախԳ. Դասարան



Այցելություն Փուռ Ղազար

11 Մարտ 2025-ին Կոկոն դասարանի փոքրիկները այցելեցին Փուռ Ղազար:



Այցելություն Տոքթ. Ալետիս Տաքեսեանի Քլինիքը

13 Մարտ 2025ին, Վահան Թէքէեան վարժարանի մանկապարտէզի Բողբոջ դասարանի փոքրիկներուն առիթ ընծայուեցաւ այցելելու Տոքթ. Ալետիս Տաքեսեանի Քլինիքը: Ան աշակերտներուն ատամները քննեց եւ շէշտեց ատամները լաւ խնամելու անհրաժեշտութիւնը:





Այցելություն Duo Print

13 Մարտ 2025-ին Նախ. Ե Եւ Զ
դասարանների աշակերտները այցելեցին
Duo Print:



Աշակերտների Տպաւորութիւնները:

13 Մարտ 2025-ին, նախակրթարանի աշակերտներով տպարան այցելեցինք, ուր դասընկերներով հետաքրքրութեամբ դիտեցինք, թէ մեքենաները ինչպիսի՛ արագութեամբ կը տպէին ու կը կազմէին գիրքերը: Ուրախ տրամադրութեամբ վերադարձանք դպրոց, մտածելով, թէ տպագրութեան գիտը մեծ առաւելութիւն տուած է մարդոց:

Սոֆի Տէր Պօղոսեան
Նախ. Ե. Դասարան

13 Մարտ 2025-ին, Նախ. Ե. Եւ Զ. Դասարանների աշակերտներով այցելեցինք տպարան, ուր տեսանք, թէ ինչպէս մեր գործածած տետրակներն ու դասացուցակները կը պատրաստուին ու անոնց վրայ պատկերներ ու գիրեր կը տպուին մեծ մեքենաներով: Շատ հաճելի այցելութիւն մըն էր:

Մոնթէ Թանքեան
Նախ. Զ. դասարան



Այցելություն Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահ

14 Մարտ 2025-ին, վարժարանիս միջն. Ա. Բ. Եւ Գ. դասարանի աշակերտները ներկայ գտնուեցան Համազգային, Սօս Սարգսեան-ի անուան պետական թատրոնի ներկայացման Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ: Դերասանները հմտօրէն եւ նորաոճ ձեւով մատուցեցին հայ մեծանուն բանաստեղծ Պարոյր Սեւակի քերթուածներէն փունջ մը՝ Մարդը Ափի Մէջ խորագիրով:



Աշակերտներու Տպաւորութիւնները:

Ուրբաթ, 14 Մարտ 2025-ին մեր վարժարանի միջնակարգ Ա., Բ. Եւ Գ. դասարանի աշակերտներս, ընկերակցութեամբ մեր ուսուցիչներուն, Տէր Մելքոնեան թատերասրահ գացինք, դիտելու՝ Պարոյր Սեւակի բանաստեղծութիւններու փունջ մը նուագի ընկերակցութեամբ՝ Մարդը Ափի Մէջ վերնագիրով: Հաճելի էր մօտէն ծանօթանալ մեծն քերթողին բանաստեղծութիւններուն, նամանաւանդ՝ երբ անոնք ներկայացուեցան սովորականէն տարբեր ոճով մը:

Իլայ ԱլՊաքասինի
Միջն. Ա. դասարան

Ուրբաթ, 14 Մարտ 2025-ին միջնակարգի աշակերտներով ներկայ գտնուեցանք Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ տեղի ունեցած, Մարդը Ափի Մէջ ներկայացման: Դերասանները վառ ապրումներով եւ նորարար ձեւով ներկայացուցին Պարոյր Սեւակի բանաստեղծութիւնները:

Աղասի Փափագեան
Միջն. Բ. դասարան

Ուրբաթ, 14 Մարտ 2025-ին վարժարանիս միջնակարգի աշակերտներս ուղղուեցանք դէպի Տէր Մելքոնեան թատերասրահ, ներկայ գտնուելու Պարոյր Սեւակի ,Մարդը Ափի Մէջ խորագրով փունջ մը բանաստեղծութիւններու նորաոճ ներկայացման, զորս դերասանները հրաշալի ձեւով բեմականացուցին զայն: Հիացած դիտեցի այդ բոլորը: Ցանկացի անգամ մը եւս ներկայ գտնուիլ այս ելոյթին:

Պերճ Գոմպէճեան
Միջն. Գ. դասարան




Մանուկներու Իրաւունքներու Օր Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահէն Ներս:

24 Մարտ 2025-ին, վարժարանիս նախ. Գ. եւ Դ. դասարաններու աշակերտները ներկայ գտնուեցան, Մանուկներու Իրաւունքներու Օր-ուան առթիւ ԼՕԽ-ի կողմէ կազմակերպուած, Լուսիկի երաժշտախառն ձեռնարկի ներկայացման:



Այցելություն Թէքէան Կեդրոն

4 Ապրիլ 2025-ին վարժարանիս Տնօրէնութիւնը, Ուսուցչակազմը, Պաշտօնէութիւնը, Միջն. Գ. դասարանի աշակերտները եւ Միջն. Բ. դասարանի աշակերտուհի Մէրի Ղազարեանը ներկայ գտնուեցան Թէքէան Մշակութային Միութեան Լիբանանի Տեղական Վարչութեան կազմակերպած՝ բանաստեղծութեան իշխան Վահան Թէքէանի մահուան 80 ամեակի առիթով նուիրուած յուշ երեկոյին, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 4 Ապրիլ 2025-ին, Թէքէան Կեդրոնին մէջ, ժըմմէյզի:



Այցելություն՝ Անթիլիասի Սրբ. Գրիգոր Լուսավորիչ Մայրավանք Հայոց Ցեղասպանության Ոգեկոչում

28 Ապրիլ 2025-ին, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Սրբ. Գրիգոր Լուսավորիչ Մայրավանքի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանության 110-րդ ամեակի նուիրուած աշակերտական ոգեկոչում-հաւաք, կազմակերպութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Ուսումնական խորհուրդին, մասնակցութեամբ Լիբանանահայ վարժարաններու աշակերտութեան, որոնք մաս կազմեց նաեւ՝ Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանի միջնակարգի աշակերտները:



Այցելություն՝ Պիքֆայայի Վանք Հայոց Ցեղասպանության Ոգեկոչում

24 Ապրիլ 2025-ի երեկոյեան վարժարանիս Միջն. Բ եւ Գ. դասարաններէն աշակերտներ մասնակցեցան Հայոց Ցեղասպանության 110 ամեակի միջգաղութային համաերիտասարդական հսկում-հաւաքի, Պիքֆայայի վանքի եղեռնի զոհերու յուշարձանին առջեւ: Անոնց կ'ընկերակցէին վարժարանիս հայերէնաւանդ ուսուցիչներ, ինչպէս նաեւ անդամներ ՌԱԿ Մկրտիչ Փորթուգալեան ակումբէն:





Այցելություն` Լիւսի Թիւթինձեան Ցուցասրահ

Forget Me Not: Siroun Ararat գիրքի հրատարակութեան եւ լոյս ընծայման առիթով, Ուրբաթ, 16 Մայիս 2025-ին Համազգայինի ,Վահէ Սէթեան հրատարակչատունը Լիւսի Թիւթինձեան ցուցասրահին մէջ կազմակերպեց հանդիպում հատորին հեղինակ Լիբանանցի մտաւորական եւ երեսփոխան Անթուան Հապշիին հետ: Սոյն առիթին ներկայ եղան վարժարանիս Միջն. Գ. դասարանի աշակերտները, ուր ծանօթացան հեղինակին ու գրուցեցին անոր հետ:

Տարբեր Տոնակատարություններ:

Ուսուցչաց Տոն:

Մարտ 2025-ին վարժարանիս Յակոբ Պարսամեան սրահին մէջ տեղի ունեցաւ Ուսուցչաց Տօնին նշումը գեղարուեստական կոկիկ յատագիրով:

13 Մարտ 2025-ին, ուրախալի ու ջերմ մթնոլորտ կը տիրէր մեր վարժարանի ուսուցչարանէն ներս. շարժառիթը հետաքրքրական էր, որովհետեւ վարժարանս այցելեց ՌԱԿ Շուշան Վարդենի ակումբի վարչութիւնը գլխաւորութեամբ ատենապետուհի՝ Տիկ. Անի Երկանեան Ղազէլեանի: Յարգարժան տիկինները փափաքած էին պատուել վարժարանիս Տնօրէնութիւնն ու Ուսուցչակազմը պատշաճ հիւրասիրութեամբ, ուսուցչաց տօնին առիթով:





Գարնան Առաջին Օրը:

21 Մարտ 2025-ին դիմաւորեցինք գարնան առաջին օրը:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Տիկ. Ամալ Գարայեանին՝ իր առատաձեռն նուիրատուութեան համար:





Զատկուան Տօնակատարութիւն

16 Ապրիլ 2025-ին, Զատկուան տօնին առիթով մեծ տօնախմբութիւն էր մեր վարժարանին մէջ:

Մեր խորին շնորհակալութիւն կը յայտնենք նախկին թէքէեանցի Աագեան քոյրերուն եւ իրենց մօր Ալիս Աագեանին, որոնք ամէն ջանք դնելով յաջողցուցին մեր վարժարանին Սրբ. Զատկուան տօնակատարութիւնը:



Վերջին Չանգ

30 Մայիս 2025-ին, տեղի ունեցավ մեր վարժարանի 2025-2024 տարեշրջանի վերջին զանգը:

Յուզիչ բաժանում մեր վարժարանի Միջն. Գ. դասարանի աշակերտներու կողմէ իրենց դպրոցէն, ինչպէս նաեւ Սէմ եւ Սիլվա Սիմոնեան մանկապարտէզի Ծաղիկ դասարանի աստղերէն, երբ կ'աւարտեն Մանկապարտէզը եւ կ'անցնին Վահան Թէքեան Միջնակարգ վարժարանի Նախակրթարանի բաժինը:





Մարզական Օր:

9 Յունիս 2025-ին, ունեցանք մեր տարեկան Մարզական Օրը՝ մեծ խանդավառությամբ եւ բազմազան խաղերով լի:



Չարդանաշխերու Փորագրութեան Աշխատանոց

11 Ապրիլ 2025-ին, վարժարանիս Միշն. Ա., Բ եւ Գ. դասարանի աշակերտները հաճոյքով մասնակցեցան Հայկազեան Համալսարանի ուսանողական հարցերու գրասենեակի եւ Երեւանի Յովհաննէս Շարամբէեանի անուան ժողովրդական արուեստի թանգարանի գործակցութեամբ կազմակերպուած հայկական զարդանաշխերու փորագրութեան յատուկ աշխատանոցին: Սոյն աշխատանոցը կը միտի վառ պահել աշակերտներուն մէջ հայ հնադարեան մշակոյթի դրսեւորումները:





Քիւրեր:

Էջմիածնասէր Տիկնանց Համախմբման 65 ամեակի տօնակատարութեան ծիրէն ներս, Ուրբաթ, 23 Մայիս 2025-ին վարժարանս այցելեցին Համախմբման ներկայացուցիչներ, յանձինս ատենապետուհի Տիկ. Անահիտ Տանձիկեանի կողակից՝ Տիար Հրայր Տանձիկեան, ընկերակցութեամբ, Քլարա Մարկոսեան հաստատութեան տնօրէն Տօքթ. Վարուժ Ալթըպարմաքեանի, ծանօթանալու համար վարժարանիս վերջին նորութիւններուն եւ յաջողութիւններուն:



EdTech-ի Արհեստագիտական Կրթության Գերազանցության Պարգևատրման Արարողություն

Երեքշաբթի, 3 Յունիս 2025-ին Վահան Թեքեյան Վարժարանի Տնօրենուհի Տիկին Սեւանա Սեմերձեան Տարագճեան պարգևատրուեցաւ հեղինակաւոր EdTech արհեստագիտական ծրագիրներու ընկերութեան յատուկ վահանակով մը՝ առ ի գնահատական իր յատկանշական ներդրումին վարժարանիս կրթական գերազանցութեան բնագաւառին մէջ: Անոր հեռատես առաջնորդութիւնը եւ նորարարութեան նկատմամբ նուիրումը զգալիօրէն նպաստած են վարժարանիս կրթական համակարգին մէջ արուեստագիտութեան ներդրման, սահմանելով բարձր չափանիշ՝ ակադեմական յաջողութեան եւ թուային փոխակերպման համար:



Ուստի, ուրախութեամբ կը յայտարարենք, որ վերոնշեալ յաջողութեան առիթով Երախտագիտութեան վկայագրեր յանձնուեցան մեր նուիրեալ ուսուցիչներուն՝ Օրդ. Ռիթա Ակոբեանին, Օրդ. Սինթիա Միլատէնեանին եւ Պրն. Աւետիս Տիպանին, առ ի գնահատանք իրենց բացառիկ նուիրածութեան եւ յաջող հսկողութեան՝ EdTech Plus արուեստագիտական ծրագիրը իրականացնելու գործին մէջ: Անոնց խանդավառութիւնը, անխոնջ աշխատանքը եւ նուիրումը՝ թուային գործիքներու կիրարկումը ընձեռելու, զինած է աշակերտները եւ հարստացուցած՝ ուսումնառութեան միջավայրը:

Ջերմապէս կը շնորհաւորենք մեր բոլոր կրթական մշակները: Ձեզմէ իւրաքանչիւրին ջանքերը կը շարունակեն ձեւաւորել մեր վարժարանին կրթական համակարգին ապագան:





Սէմ եւ Սիւվա Սիմոնեան Մանկապարտէզի Ամաւերջի Հանդէս ու Վկայականաց Բաշխում:

Շաբաթ 14 Յունիս 2025, երեկոյեան ժամը 6:00- ին, "Յակոբ Պարսամեան" սրահէն ներս տեղի ունեցաւ 2024-2025 տարեշրջանի Սէմ եւ Սիւվա Սիմոնեան Մանկապարտէզի ամաւերջի հանդէսն ու վկայականաց բաշխումը: Աշակերտները հանդէս եկան գեղարուեստական պատշաճ յայտագիրով մը, որմէ ետք ընթացք առաւ վկայականաց բաշխման արարողութիւնը:







Ամավերջի Հանդես ու Վկայականաց Բաշխում:

Շաբաթ 28 Յունիս 2025, երեկոյեան ժամը 6:00- ին, "Յակոբ Պարսամեան" սրահին ներս տեղի ունեցաւ 2024-2025 տարեշրջանի ամավերջի հանդէսն ու վկայականաց բաշխումը:

Աշակերտները հանդէս եկան գեղարուեստական պատշաճ յայտագիրով մը, որմէ ետք ընթացք առաւ վկայականաց բաշխման արարողութիւնը:





Email: info@vahantekeyan.com
Website: www.vahantekeyan.com
Facebook: Vahan Tekeyan School in Lebanon
Instagram: [vahan.tekeyan](https://www.instagram.com/vahan.tekeyan)
Phone number: 01/260525 - 01/260574